# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման**

**«Մարդու իրավունքները և ոստիկանությունը» առարկայի դասընթացի**

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի «Հատուկ
պատրաստականություն» կրթաճյուղի
01.06.2018թ. նիստում
արձանագրություն թիվ 4

**Երևան**

**2018թ.**

# ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» առարկայի եռամսյա դասընթացի

| | Թեմաների անվանումը | Ժամա-քանակն ըստ թե-մաների | Ժամաքանակն ըստ պարապմունքների ձևի | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Դասա-խոսու-թյուն | Գործ-նական | Սեմինար |
| | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| . | Մարդու իրավունքները և ոստիկանությունը դասընթացի առարկան և խնդիրները | 4 | 2 | | 2 |
| . | Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը ոստիկանության ծառայողի գործունեության համատեքստում: | 4 | 2 | | 2 |
| . | Քաղաքացիություն, երկքաղաքացիություն: Օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք: | 4 | 2 | | 2 |
| . | ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները | 4 | 2 | | 2 |
| . | Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ոստիկանության ծառայողի կողմից: | 4 | 2 | | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **20** | **10** | | **10** |

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի ավագ դասախոս, ոստ. մայոր
Սուքիասյան Ն.Ռ.

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանությ
կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատ
պատրաստականություն» կրթաճյուղի նիստ
արձանագրություն թիվ 4 01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ. փոխգնդապետ
Ձաղացպանյան Գ.Ա.

## 1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

ՈՒսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 20 ժամ, որից՝

- դասախոսություն – 10 ժամ
- սեմինար– 10 ժամ:

## 2. «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է՝ նպաստել սովորողների իրավական գիտելիքների աճին, նրանց իրավագիտակցության զարգացմանը, ոստիկանին անհրաժեշտ իրավական պատկերացումների և արժեքային համակարգի ձևավորմանը: Առարկայի դասավանդման ընթացքում լուծվում են մասնագիտական ուսուցման հետևյալ խնդիրները՝

1. Սովորողների մոտ ձևավորել ոստիկանության գործունեության ընթացքում մարդու անձեռնմխելիության երաշխիքները պահպանելու հմտությունները:
2. Սովորողներին ծանոթացնել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիային;
3. Սովորողներին ուսուցանել քաղաքացիության, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավական կարգավիճակին ՀՀ-ում:
4. Սովորողներին ծանոթացնել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու նհիմնական իրավունքներին և ազատություններին:
5. Ուսուցանել մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ոստիկանության ծառայողի կողմից;

## 3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները.

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել մարդու իրավունքների և հիմնարար ազատություններին վերաբերյալ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը:
2. Սահմանել քաղաքացիությունը, օտարերկրացի, քաղաքացիություն չունեցող անձանց և երկքաղաքացիություն ունեցող անձանց կարգավիճակի բնորոշումը և հասկացությունը:
3. Թվարկել և պարզաբանել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:
4. Ներկայացնելլ մասնավոր կյանքի ինստիտուտի դերը, նշանակությունը և դրա անձեռնմելիության երաշխիքները:
5. Ներկայացնել ոստիկանության ծառայողի իրավունքները և պարտականությունները մարդու իրավունքները և ազատությունները սահմանափակելիս:

## 1. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ.

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Իրավունքի հիմունքներ», «Ծառայության իրականացման մարտավարություն», «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ», «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը», «Ոստիկանության գործունեության կառավարում»:

## 2. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ.

ՈՒսուցումը իրականացվում է դասախոսությունների և սեմինարների տեսքով՝ լայնորեն կիրառելով ուսուցման ինտերակտիվ մեթոդները /«մտքերի տարափ», «զրույց», «բանավեճ» և այլն/: Նյութի յուրացմանը մեծապես օժանդակում են դիդակտիկ պաստառները: Սեմինարների ընթացքում իրավիճակային խնդիր-առաջադրանքների և դերախաղերի միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք տեսական գիտելիքներով ամրապնդվելով, դառնում են առաջիկա արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

## 3. ՈՒսումնական նյութի բովանդակությունը.

**<u>Թեմա 1.</u> Մարդու իրավունքները և ոստիկանությունը դասընթացի առարկան և խնդիրները**

1. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հասկացությունը, դրանց իրավական բնույթը, գերակայությունը,
2. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները,
3. Անձի արժանապատվության հասկացությունը,
4. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դասակարգումը:

**<u>Թեմա 2.</u> Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը ոստիկանության ծառայողի գործունեության համատեքստում**

1. Մարդու իրավունքների և ազատությունների միջազգային իրավական հիմքերը,
2. Մարդու իրավունքների և ազատությունների ներպետական և միջազգային իրավական աղբյուրները,
3. Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային նորմերի արտացոլումը ներպետական օրենսդրության մեջ, ոստիկանության ծառայողի գործունեության համատեքստում:

**<u>Թեմա 3.</u> Քաղաքացիություն, երկքաղաքացիություն: Օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք**

1. ՀՀ քաղաքացիություն:ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման հիմքերը,
2. Երկքաղաքացիություն, ձեռքբերման հիմքերը,
3. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը ՀՀ-ում:

## <u>Թեմա 4.</u> ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները

1. Մարդու և քաղաքացու անձնական իրավունքները և ազատությունները,
2. Մարդու և քաղաքացու քաղաքական իրավունքները և ազատությունները,
3. Մարդու և քաղաքացու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները և ազատությունները:

## <u>Թեմա 5.</u> Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ոստիկանության ծառայողի կողմից

1. Մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքների իրականացմանը աջակցելու ոստիկանության պարտականությունները,
2. Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը և հիմքերը,
3. Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման դեպքում ոստիկանության ծառայողի կողմից ծանուցման ենթակա իրավունքների ցանկը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. ՀՀ Սահմանադրություն - 1995թ.,
2. «ՀՀ Սահմանադրական իրավունք» Ն. Այվազյան, Երևան- 2016թ.,
3. Ա. Երիցյան «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնահարցեր /տեսական և կիրառական վերլուծություն/» Երևան 2001թ.,
4. Մ. Ատովմյան «Մարդու իրավունքներն քո իրավունքներն են» Երևան 2004թ.
5. Վ. Հովհաննիսյան «Միջազգային պայմանագրերի կնքման և կատարման տեսական և գործնական մի քանի հարցեր», Երևան 2001թ.,
6. Գ. Մանուկյան «Մարդու իրավունքների հասկացությունը», Վանաձոր 2000թ.
7. Վ. Այվազյան «Մարդու իրավունքները», Երևան 2007թ.,
8. Общая теория прав человека Е.Лукашева, М.1999г.
9. Устав Организации Обьединенных Наций и Статут Международного Суда
10. Г.Даниленко Международная защита прав человека М.2000г.
11. Л.Глухарева Права человека в современном мире М.2003г.